

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ «ՀԱՅԵՐԵՆ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ»-Ը

ԹՈՐԳՈՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հայ բառարանագրության մեջ իրենց ուրույն տեղն ունեն մեր լեզվի բա-
ռային շերտերից մեկի՝ բարբառային (իմա գավառական) բառապաշարի հա-
րստությունը ներկայացնող բառարանները, որոնք հրապարակ եկան դա-
րասկզբում, երբ բուն զարգացում էր ապրում ու նորմավորվում գրական
հայերենը: Գրական լեզվի կանոնավորման շրջանում, անշուշտ, ետին պլանի
վրա էին մղվում բարբառները, գեղարվեստական գրականության լեզուն
մաքրվում էր բարբառայնությունից, մոռացության ու կորստի վտանգի տակ
էին հարյուրամյակների ընթացքում գործածված ու իրենց հաղորդակցական
դերը կատարած հազարավոր բառեր ու դարձվածաբանական միավորներ:
Այդ շրջանում իրենց շնորհակալ գործը կատարեցին մեր մշակույթի ու լեզվի
անխնայ մշակները՝ Տ. Նավասարդյանը, Կ. Գարիկյանը, Ս. Ամատունին
և Հ. Աճառյանը, որոնք (մեկը մյուսից անկախ ու միաժամանակ) եկան այն
հետևություն, որ պետք է կորստից փրկել ժողովրդական բառ ու բանը, նրա
(ժողովրդի) մտքին ու հոգուն հաղազատ լեզվական միավորները¹: Այդ նպա-
տակով կաղմվեցին բարբառային բառապաշարը ներկայացնող բառարան-
ներ, որոնք հարուստ նյութ մատակարարեցին հետագա շրջանի բացատրա-
կան, հոմանիշային, դարձվածաբանական և այլ բնույթի բառարաններին,
մասնավորապես Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ին,
Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ին, «Դարձվածա-
բանական բառարան»-ին և այլն:

Այս կարգի բառարանների արժեքը խիստ բարձրանում է նաև նրանով,
որ եղած գրավոր աղբյուրներից բացի, որոնք բարբառագիտական, բանա-
հյուսական, ազգագրական հարուստ նյութ են պարունակում, հեղինակներն
օգտագործել են նաև բանավոր խոսքի անսպառելի աղբյուրը՝ դրանով իսկ
առաջին անգամ բառարանագրական մշակման ենթարկելով ու կյանքի կո-
չելով մեր հոգևոր մշակույթի շատ գանձեր: Եվ միանգամայն իրավացի էր
Ս. Ամատունին՝ «Հայոց բառ ու բան» մեծարժեք աշխատության հեղինակը,
երբ գրում էր. «... գոյություն ունեցող առարկաների, իրերի անուններ, երբ
պակասում են մեր գրական լեզվի մեջ, այդ դեռ չի նշանակում, թե այդ
անունները չկան հայ լեզվում. կան, բայց պետք է դիմել ժողովրդին և այն-
տեղ որոնել, գտնել և ի լույս հանել, և ընդհանրացնելով՝ հաղատացնել դրա-
կան լեզուն...»² (ընդգծումները մերն են—Թ. Մ.):

Գրական լեզվի հարստացման կարևորագույն աղբյուրներից մեկի՝ ժո-
ղովրդական լեզվի անսպառ գանձերի հավաքման ու մշակման ազնիվ գործին
են նվիրվել մեր այն բառարանագիրները, որոնց տքնաջան աշխատանքի-

1 Ս. Ամատունի, «Հայոց բառ ու բան», Վաղարշապատ, 1912, էջ 6:

2 Նույն տեղում:

շնորհիվ մեզ են հասել ու մեր սեփականությունը դարձել բարբառային բառապաշարի հազարավոր բառեր ու արտահայտություններ, որոնք որոշակի մշակմամբ ու արժեքավորմամբ մուտք են գործել գեղարվեստական գրականության լեզվի մեջ:

Հալերենի գավառական (բարբառային) բառարանների մեջ իր բառացանկի ընդարձակության և ընդգրկած բարբառների ծավալի տեսակետից ամենանշանակալի մեծանուն հայագետ Հ. Աճառյանի «Հայերեն գավառական բառարան»-ն³ է, որը շուրջ յոթ տասնամյակ ծառայել է մեր գիտությանը, մշակույթին ու գրականությանը: Բառարանի հանդես գալը նշանակալից երևույթ էր հայ մշակույթի, մասնավորապես հայ բարբառագիտության ու բառարանագրության մեջ: Բառարանը լայն արձագանք գտավ և ըստ արժանվուն գնահատվեց հայ մշակույթի գործիչների (Կ. Կոստանյանի, Հ. Թումանյանի, Ն. Ակինյանի, Հ. Ավգերյանի) կողմից:

Ներկա քննությունը նպատակ ունի գնահատելու, ներկայացնելու բառարանն իր արժեքներով ու տեղ գտած թերություններով, որոնց հաշվառումը, մեր կարծիքով, կօժանդակի ապագա լիակատար բառարանի կազմության սկզբունքները մշակելուն:

Հ. Աճառյանի բառարանի բառացանկն ընդգրկում է 31 բարբառների շուրջ 30.000 բառեր ու դարձվածաբանական միավորներ: Սակայն հեղինակը գտնում էր, որ այդ բառացանկը լիակատար չէ, քանի որ իր մոտավոր հաշվումներով հայերենի գավառական բառերի թիվը անցնում է 100.000-ից: Իրոք, բառարանը չի ընդգրկում հայերեն բարբառների ողջ բառամթերքը: Այդ թերությունն առավել ևս ակնառու է մեր օրերում՝ հայագիտության զարգացման աստիճանի ու պահանջների նկատառումով:

Բառարանի առաջաբանում հեղինակը նշում է իր օգտագործած աղբյուրները⁴, որոնք կարելի է բաժանել 3 հիմնական խմբերի, 1. տարբեր հավաքողների կողմից կազմված, առանձին բառարանների վերաբերող փոքրածավալ հավաքածուներ, բառացանկեր, 2. մամուլից և գրքերից հավաքված բառեր, 3. շրջագայությունների ընթացքում հեղինակի կողմից բարբառային կենդանի խոսակցությունից հավաքված բառեր: Աղբյուրները, ինչպես տեսնում ենք, բավականին բազմազան են, սակայն, անբավարար՝ ամբողջական բարբառային բառարան ստեղծելու համար: Հ. Աճառյանի «Հայերեն գավառական բառարան»-ը իր ժամանակի ծնունդն էր: Ինչպես հեղինակն է նշում, եղել են հնարավորություններ բառացանկը ընդլայնելու, ինչպես նաև բառարանի մի շարք թերություններ վերացնելու համար, բայց հապշտաղ տպագրությունը խափանել է այդ հնարավորությունները:

Հայ բարբառների բառապաշարը Հ. Աճառյանը բաժանում է երեք հիմնական խմբի: Նա գավառական է համարում այն բառերը, «որոնք օտար լեզվի մը փոխ առնված չեն, հայերեն են, բայց միևնույն ժամանակ հին հայ մատենագրության մեջ ավանդված չեն»⁵:

³ Հ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան (Եմիսյան ազգագրական ժողովանոց, հ. Թ, Թիֆլիս, 1913):

⁴ Նույն տեղում, էջ 1—18:

⁵ Նույն տեղում, էջ 4:

Գավառական բառերի վերոհիշյալ բնորոշման հիման վրա էլ կազմվում է բառարանը, որը պիտի պարունակե բոլոր հայ գավառական բառերը, ինչպես նաև այն ձևերը, որոնք կազմված են հայ և օտար բառի մը բարդության մեջ և ածանցմամբ⁶։ Առաջարկում հեղինակը հավաստում է, որ բառարանի մեջ առնված են «զուտ գավառական բառերը», իսկ «օտար բառերն անխնա կերպով վտարված են»⁷։

Գավառական բառարանի կազմության սկզբունքային հարցերից մեկն է բարբառային զանազան տարբերակներից գլխաբառի ընտրության հարցը։ Հ. Աճառյանը խոսում է գավառական բառերի նախաձևերի մասին, ամենայն իրավամբ նշելով, որ բարբառային բազմազան ձևերը պետք է համեմատվեն, պետք է բացահայտվի նրանց հնչյունաբանորեն օրինական կամ աղավաղված ու կնդծ լինելը, ապա ընտրվի գլխաբառը։ Ընդ որում, հնչյունական օրենքները բացահայտելու, նախաձևերը վերականգնելու համար պետք է հիմնվել բարբառներում պահպանված բուն հայերեն բառերի համեմատական ուսումնասիրության վրա։ Բառերի բարբառային տարբերակների բազմության դեպքում վերականգնված ձևն ավելի հավաստի է և վերականգնումը համեմատաբար հեշտ։ Մինչդեռ միայն մեկ բարբառում հայտնի բառերի վերականգնման ժամանակ, երբ համեմատության եզրեր չկան, անհրաժեշտ է հիմնվել բառի ստուգաբանության վրա՝ օգտվելով ընդհանուր հնչյունաբանական օրենքներից։

Շատ կարևոր է նաև բառերի զանազան բարբառային արտասանական ու հնչյունային տարբերակների հարցը, որը գավառական, ինչպես նաև այլ բառարաններում և առհասարակ հայ բառարանագրության մեջ, դեռևս վերջնականորեն լուծված չէ։ Այդ մասին Հ. Աճառյանը գրում է. «Արդ՝ այս կրկնակ, եռյակ, քառյակ և ավելի ձևերն, որը անցունելու է Գավառական բառարանին մեջ. եթե ամենքն ալ անցնենք, այն ժամանակ ոչ միայն աշխատությունը 3—4 անգամ կընդարձակվի, այլև ընդհանուր խառնակություն մը կը տիրե և գիտությունը բան մը ըսած չըլլար»⁸։

«Հայերեն գավառական բառարան»-ը միայն բացատրական բնույթ չունի և, ինչպես նշում է հեղինակը, այն «նաև ստուգաբանական է»⁹, սակայն, ստուգաբանությունների ամբողջությունը անհամեմատ փոքր կշիռ ունի բառարանի ընդհանուր ծավալի մեջ, ուստի «ստուգաբանական» իմաստը պետք է ըմբռնել վերապահությամբ։ Բառարանում ստուգաբանվում են ոչ թե բոլոր գլխաբառերը, ինչպես այդ արվում է իսկական ստուգաբանական բառարանում, այլ միայն նրանք, որոնք նոր բառեր են, չկան հայերեն բառարաններում և ստուգաբանված չեն։

«Հայերեն գավառական բառարան»-ը բառամթերքի ոչ լիակատար ծավալի և այլ թերություններով հանդերձ հայ բառարանագրության հարուստ ու բովանդակալից երկերից մեկն է։ Նրա բառացանկը կազմող բառերն ու դարձվածքները վերաբերում են մեր ժողովրդի կյանքի ու գործունեության բազմաթիվ ու բազմազան բնագավառներին։ Ըստ տարածական, բարբառային

⁶ Նույն տեղում, էջ 5։

⁷ Նույն տեղում։

⁸ Նույն տեղում, էջ 8։

⁹ Նույն տեղում։

պատկանելիությունն այդ բառերն ու դարձվածքները կարելի է բաժանել հինգ հիմնական խմբերի¹⁰. ա) մեկ բարբառում հայտնի բառեր, ինչպես՝ ալալ (Ղրբ.), ակուց (Ախբ.), կնիշ (Ակն), մտֆել (Սշ.), չոքս քոքի բերող (Տիգ.) և այլն, բ) մի քանի բարբառներում գործածվող բառեր՝ ախլանֆ, դան, թունգի, ծկրակել, նաթիլ, դալաֆի, ջոջուք, փառտել, ֆացխիլ և այլն. նաև՝ շունլ տերը շի նանաչեր, պատը ականջ ունի և այլն, գ) ընդհանուր բարբառային բառեր, որոնք կան գրեթե բոլոր բարբառներում կամ առնվազն բարբառների մեծ մասում, ինչպես՝ աբուռ, ալոն, բրդուն, կոտոշ, զոռ, նաև՝ մագ չի պակսի, մագին դիպշիլ և այլն, դ) բառեր, որոնց բարբառային համարելը եթե սխալ է, ապա վիճելի է. այդ բառերի մի մասը, թերևս, բառարանը կազմելու ժամանակ բարբառային է հղել կամ, ավելի ճիշտ, գրական լեզվում լայն գործածություն չի ունեցել, ինչպես՝ ամպակալել, արտառոց, գլխապատառ, թոկ, խնամախոս, թոնրատուն, մուղաշափ, ցանովի և այլն, ե) բոլորովին չմեկնված բառեր (որպես գավառականների մայր ձևեր):

Հստ իմաստի Գավառական բառարանի բառերն ու դարձվածքները կարելի է ներկայացնել հետևյալ ստորաբաժանումով.

1. Բուսանուններ՝ ալոն, սլրիկ, ակր, աղնաբեկ, աղշբունկ, անառ, այծամորի, ապրիմ-չապրիմ, արևաբաց ծաղիկ, արջակնիկ, բաքաքուկ, բանին, գմուկ, դանդուռ, եղի խոտ, զննուկ, ընկուզակ, թուրթիկ, իշառվույտ, իշախաղող, լալադար, լալապնդիկ, խագաղ, ծաղկակալ, նաչաբաշ, ձիանպուշ, դոժդոժ, նեննուկ, մաաուկ, նուկ, շանխաղող, շանսխոտ, որձխոտ, շաշմիկ, պառպուռիկ, ջամաղ, սևախոտ, տերողորմիկ, տերաղորմիկ, բունունդ, ցորենուկ, փաշեկ, ֆարին, օշոշ և այլն: Բառարանի բազմաթիվ բուսական բառեր հանդիպում են հայ միջնադարյան բժշկական ու դեղաբանական երկերի ու բառարանների մեջ (Բառք Գաղիանոսի բժշկականի, Բարգամանուսի դեղոց, Անդրուսաց անպէտ, Օգուտ բժշկութեան, Վասն դեղերուն, Բառք բժշկական վարդապետաց և այլն), օրինակ՝ աղշբունկ, աննուռ, արտիճուկ, բագուկ, բոխ, դառնին, եզան լեզու, երեքնուկ, բանի ծաղիկ, կանկառ, մուշկ, նուիկ, պորինջան, պտիկ, ցաֆի, ցրդի և այլն:
2. Թռչունների, կենդանիների, միջատների և այլ անուններ՝ աբեղաձագ, ալաչակչակ, զարոշ, իպուպումպ, լելակ, կուտկուտ, նելին, նագում, տուլաշ, ականջմուտ, ալիֆլունֆ, ակլատիզ, ավակ, պապկուր և այլն:
3. Հագուստների անուններ՝ դալմա, թալլա, ժամաշապիկ, կապա, կուրտիկ, մխնոց, շաքալ և այլն:
4. Մենդամթերքների, ճաշերի, ըմպելիքների անուններ՝ ախով, ակներ, ակնիկ, ակոածածա, բագկաբան, բաղեղապուր, գալանոշ, զկեռմածուն, թերմուն, յուղաշոռ, լիլկապուր, նանիկ, նլպուր, մախոխ, մխու, ջրխաշ, սամիր, փաթան և այլն:
5. Գործիքների և նրանց մասերի անուններ՝ ալբաշ, ակիշ, ակոախիլ, արջկան, բալխի, բինի, դառոտ, թաթակիշ, մանկեռ, մարկոս, մրիթ, ռոֆ,

¹⁰ Նկատի ունենք, որ գլխաբառի դիմաց նշված բարբառներով չի սահմանափակվում այդ բառի տարածքային ընդգրկումը. տվյալ բառը կարող է լինել նաև այլ բարբառներում, որոնք նշված չեն գլխաբառի դիմաց: Բառերը խմբավորելիս մենք հիմնվում ենք միայն բառարանի տվյալների վրա: Ուստի այդ խմբավորումը որոշ իմաստով հարաբերական է:

- սանդերձ, վառ, տանձաֆաղի, տուրթու, փեյնու, փշմանգաղ, ֆառախուլի, ֆառմաղ և այլն:
6. *Կաղերի անուններ՝* այծ-այծ, աչֆակապուկի, ափուճոպ, ափլապուղ, բաբուտան, բիբի, գարի-կորի, երկայն-էշ, թաղլուն, ծուկի, կաղնի-կաղ, ճինկիլիսոն, մածուն ծախեմ, սիւրսիւր, տանանա, փամփաստ, ֆարկտիկ, օշոշ և այլն:
 7. *Վիրավորանք, նվաստութիւն, հայհոյանք արտահայտող անվայել բառեր և արտահայտութիւններ:*
 8. *Մաղթանքներ, օրհնանքներ և անեծքի բառեր:*
 9. *Առողջական ու հոգեկան վիճակ, ապրումներ, զգացմունքներ արտահայտող բառեր:*
 10. *Մարդու և կենդանիների մարմնի մասերի անուններ:*
 11. *Ընտանիք, հարազատութիւն, բարեկամութիւն և այլ փոխհարաբերութիւններ ցույց տվող բառեր:*
 12. *Չափ, կշիռ, ծավալ, տարածութիւն նշանակող բառեր, հարկերի, տուրքերի, դրամական միավորների անուններ:*
 13. *Մարդու կյանքի ու գործունեության երևույթներ նշանակող, հաղորդակցման համար շատ կարևոր բառեր:*
 14. *Դարձվածաբանական միավորներ, որոնք մեծ մասամբ կազմված են մարդու մարմնի մասեր (գլուխ, աչք, ականջ, բերան, սիրտ, ոտք, ձեռք), կենդանիներ (դալլ, շուն, կատու), բնության երևույթներ (լույս, մութ), դույններ (կարմիր, կանաչ, սև) նշանակող բառերի օգտագործումով, ինչպես՝ գլխին խաղ խաղալ, աչքը դուրս գալ, ականջը կախել, բերանին կապը կտրել, սրտեն արյուն երթալ, երկու ռաֆը մեկ աման խոթել, ոտքից ու ձեռքից ընկնել, ոտքը ֆարին առնել, շուն ու գայլի բաժին լինել, փորը կատու մտնել, օձի լեզու ունենալ, շունը տերը չի ճանաչեր, լույսի բաժին լինել, մութ տուներուն լույս կուտա, սև անել գլխին, կանաչ արև և այլն:*
- Բառարանում բերված դարձվածների գավառական համարելու հարցը Հ. Անառյանը ոչ բոլոր դեպքերում է միանշանակ կերպով լուծել. կան դարձվածներ, որոնք գրական լեզվի մեջ գործածված են եղել դեռևս բառարանը կազմելուց առաջ:
- Գավառական բառարանը բառացանկեր ունի հայերենի այբուբենի բոլոր տառերով, գլխաբառերը շարված են կանոնավոր այբբենական դասավորութեամբ և բառակազմական վերլուծությամբ՝ ձևութների առանձնացումով, ինչպես՝ ագբ/ա/ փայտ, անո/կել, կալ/իշ, չար/չր/վիլ, շխոս/կան, պատո/ա/ռ/ել և այլն: Սակայն գլխաբառը վերլուծաբար ներկայացնելու այդ կարևոր եղանակը մինչև վերջ չի կիրառված. Պ-ի բառացանկում այն երևում է մի քանի գլխաբառերում, իսկ Զ-ի բառացանկից սկսած մինչև բառարանի վերջը՝ իսպառ գոյութիւն չունի: Դարձվածաբանական միավորները համապատասխան առանցքային գլխաբառերի տակ բերվում են գծիկով՝ մեկնութիւնից ու ցուցադրումներից հետո: Բարբառային չհամարվող, բայց որպես մայր ձև հանդես եկող բառերը բերվում են առանց մեկնության, այսպես՝

— Աստված...

— Ասառած աղբրագիր...

— Աստված այն հավը շխոսացնե...

— Աստված այն օրը չցուցանե...

— Աստծու առաքել... և այլն:

Սակայն, ինչպես երևում է բերված օրինակից, դարձվածաբանական միավորների այբբենական կարգը հաճախ խախտված է, առանձին դեպքերում չի դրված գծիկը: Առանցքային բառերը երբեմն մեկնվում են համառոտ կերպով՝ «Լաց. լալու փորձողությունը», «Իմաց՝ լուր» և այլն:

Գլխաբառերի տարբերակները, որոնք իրենց հնչյունակազմով չեն խախտում բառացանկի այբբենական կարգը, բերված են նոր տողից, որպես ինքնուրույն գլխաբառեր, բարբառների համառոտագրություններով և (մեծ փառաժեց առաջ) տրվում է դրանց ընդհանուր մեկնությունը.

Բանջար/բուսիկ	Ալշ.	} Գարնան սկիզբը տեղացող մանր կարկուտ, որ ցանքերուն վնասակար չէ:
Բանջար/բուսակ	ՆՀԲ	
Բանջար/բուսիկ	Կր. Ղրբ.	
Գարնանատեղ	ՆՀԲ	

Յամ՝

Կանաչ/մատուտ

Կանաչ/մացոց

} Տե՛ս մատուտ:

2. Աճառյանը կիրառում է գլխաբառի ներկայացման նաև այլ ձևեր, ինչպես՝ «բասպինդ (որ և բասմենդ)»...»: Տեղ տնտեսելու ձգտումը, ինչպես տեսնում ենք, իր ազդեցությունն է թողել գլխաբառերը միասնական եղանակով ներկայացնելու հարցում:

Բառարանում կան գլխաբառերի մեկնության զանազան ձևեր, սակայն հիմնականը առադրական, հոմանիշային և նկարագրական մեկնություններն են: Համարժեքային մեկնությունները, բնականաբար, համառոտ են և տրվում ինչպես գործողություն, վիճակ և հատկանիշ ցույց տվող գլխաբառերին: Կան նաև խառը մեկնություններ՝ ստուգաբանություններով հանդերձ, նկարագրական մեկնությունները չեն սահմանափակվում միայն գլխաբառի իմաստի բացատրությամբ, այլ, ինչպես հանրագիտական բառարանի բառահոգվածներում, բազմապիսի տեղեկություններ են պարունակում արտաքին նկարագրի, կառուցվածքի, գործառույթի, նպատակի, վիճակի, ժամանակային ու տեղային հարաբերությունների, չափի, քանակի, հատկանիշների և այլնի վերաբերյալ: Նման բառահոգվածներն ընդարձակ են: Մշակույթի համար շատ արժեքավոր են ժողովրդական արարողությունների, ծեսերի, խաղերի, սովորույթների նկարագրությունները, որոնք, որպես հազվագյուտ, եզակի գրավոր ավանդույթներ, մինչև օրս հայտնի են միայն Գավառական բառարանով: Դրանք գլխավորապես ժողովրդական խաղեր, կերակրատեսակներ, բույսեր, գյուղատնտեսական գործիքներ նկարագրող բառահոգվածներն են (այծ-այծ, ընկեր մեզ կեռան, բազկաթան, կաղնիկաղ և այլն):

Առանձին դեպքերում Գավառական բառարանի հեղինակը, որպես բառիմաստի բացատրության օժանդակ միջոց, օգտվում է պատկերագրումից: Գծապատկերը հատուկ է հանրագիտական բառարաններին, սակայն, Գավառական բառարանում այն (սահմանափակ չափով) օգտագործված է տեղին՝ հայ գյուղի կենցաղում գործածված հասարակ գործիքների ու պարզագույն սարքերի ընկալումը ճիշտ, ակնառու դարձնելու նպատակով: Գծապատկերներ կան, օրինակ, արջկան, բռնիչ, զոբբիճ, գոմփիկ, դաննա, դողիկ, եղան, քաթ,

բաւֆիկ, թելատու, լապուղա, լեխտը, խաչամեղիք, խեչակ, կեռմայր, կռո, կռնդակ, հալ, ձկնամեջք, մղան, պողոսակ, սալակ, վիլակ, վիլատու, տաբթու, փուշփուշաւի, քամելի, քարխալի և այլ բառերի բառահոգւածներում:

Բառամեկնութիւն օժանդակ միջոց է համարժեք օտար բառը բերելը, ընդ որում տրվում են գլխավորապէս ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերեն ու պարսկերեն համարժեքներ: Այդ բավականին տարածված միջոցին հեղինակը դիմում է նախ գիտական նկատառումով՝ բառի ծագումը ցույց տալու համար, ապա հայերենին լավ շտիրապետող մարդկանց համար իր մեկնութիւնները ավելի ստույգի դարձնելու նպատակով: Լրացուցիչ բացատրութեան համար օտար բառերին դիմելու եղանակը օգտագործված է գլխավորապէս բուսանունների, բժշկական, կենսաբանական տերմինների մեկնութիւններում: Այդ բաւերը անհրաժեշտ են հատկապէս տերմինային իմաստների ճիշտ բացատրութեան համար, մանավանդ այն դեպքերում, երբ մայրենի գրական լեզվի միջոցներով դժվար է սպառնիչ մեկնութիւններ տալը: Բառահոգւածներում կարկոր տեղ է տրված գլխաբառի կրած փոփոխութիւններին, ցույց է տրվում ձևերի առաջացումը՝ հնչյունային գործոնների և իմաստային անցումների շնորհիվ: Օրինակ՝ «թալել Պլ. թալնել Տփ. թալանել Երև. Ղրբ. «կողոպտել, ավարել»: Տունը անդը թալեցին: Ուղղագրւյն և հնագրւյն ձևն է թալանել, որմն միջին ա-ի հապավմամբ ձևացած է թալնել. սուկն ալ բաղաձայններու նմանութեամբ՝ թալել. հմմտ. կլանել>կլնել>կլել, ելանել>ելնել>ելլել, լինել>լլնել>լլլալ ևն. արմատն ունինք թալան Երև. Ղրբ. «կողոպտել, ավարել»: Բոլորն ալ փոփոխութիւն են. հմմտ. շաղաթայ talamaq կողոպտել, թալել. talan թալան, ավար, կողոպտել, պրս. tālidan ավարել, կողոպտել. talan կապտել, կողոպտել»: Այսպիսի բառահոգւածներ շատ կան բառարանում:

Ստուգաբանութիւնը բառարանի խնդիրներից մեկն է: Ստուգաբանութիւնները, որոնք մեծ մասամբ կատարվում են գիտական խորութեամբ ու բարիխղճութեամբ, իրոք, անհրաժեշտ են և ընդհանուր առմամբ բարձրացնում են բառարանի արժեքը: Ստուգաբանված են, օրինակ՝ ապլիկ (ապլոց), առնափուտ, աբտիճուկ, բաթուկ, զբջակ, ղուղուլ, երմուկ, զինգ, թրիշա, լաչակ, խաբուկ, կոտոշ, նղակ, նոռով, մալախ, նեղկնուկ, շուկալ, շամչիկ, Կախնդ, ռուփակ, սալբանդ, տաբաղ, փելա, փալաղա, փաթթու և շատ այլ բառեր: Պետք է նշել, սակայն, որ կան համառոտ, միայն բառի ծագումը ցույց տվող, ինչպէս նաև ոչ լիարժեք, անհամոզիչ, կասկածելի ու ենթադրական ստուգաբանութիւններ՝ ալեվլուսն, ալապուճուկ, սուլանակ, անգի, սովանի, քարսուղ, զոնկան, բանդաղ և այլն: Կասկածելի ստուգաբանութիւնները հեղինակը հաճախ հարցականի տակ է դրել:

Բառահոգւածները պարունակում են համառոտ օրինակներ, որոնց միջոցով ցուցադրվում են մեկնվող բառերի զանազան իմաստային առումներն ու նրբերանգները: Օրինակները քաղված են ինչպէս գրավոր աղբյուրներից, այնպէս էլ կենդանի բարբառային խոսքից: Սակայն օրինակներն ու ցուցադրումները հարուստ չեն, շատ բառահոգւածներ զուրկ են դրանցից նույնիսկ այն դեպքում, երբ մեկնութիւնների մեջ դրանց առկայութիւնը խիստ անհրաժեշտ է: Ցուցադրական նյութի անբավարարութիւնը գալիս է բառարանի աղբյուրներից, որոնք միշտ չէ, որ բառերի հանգամանալից մեկնութիւններ են տալիս: Մեկնութիւնները կատարվում են «ՏԵՆ» և «Հմմտ.»

համառոտագրություններով, առանձին դեպքերում նաև բառերի այլ ձևերի առնչումով:

Գավառական բառարանի կազմության սկզբունքները ամբողջ աշխատության մեջ հետևողականորեն չեն կիրառվել, և դրանով էլ պայմանավորված են բառարանի մի շարք էական թերությունները: Եթե հեղինակը «մերթ մաքուր և մերթ այլալված ձևերով» մատենագրությամբ վկայված բուն հայերեն բառերից տարբերում է չվկայված բառերն իբրև գավառական, ապա այդ դեպքում նա բառացանկի մեջ չպետք է մտցնեի, ասենք՝ անթ, զիլ, տրամ, իռանտ և բազմաթիվ այլ բառեր, որոնք բերվում են «գրք.» (իմա «գրաբարյան») նշումով: Դրանք չեն մտնում արդի հայերենի բառամթերքի մեջ և գործածվում են առանձին բարբառներում: Բայց այդ բառերն ավանդված են հայ հին մատենագրության մեջ և հաճախ բարբառներում, ըստ բառարանի, գործածվում են նույն գրաբարյան իմաստներով, ինչպես, օրինակ՝ անթ բառը Տրապիզոնի բարբառում: Կասկած չի կարող լինել, որ այդ բառերը պետք է մտնեին բառացանկի մեջ, սակայն, այդ դեպքում գավառական համարել ասնոնք միայն, որ հին մատենագրությամբ ավանդված չեն¹¹ սահմանումը թերի է: Գավառական պետք է համարվեն (ինչպես և համարված են բառարանում) նաև հայ հին մատենագրության այն բառերը, որոնք դուրս են եկել արդի հայերենի բառային կազմից, բայց պահպանվել են բարբառներում: Հ. Աճառյանը քառ ասելով, ի դեպ, շատ դեպքերում նկատի ունի բառի ոչ թե ձևը, այլ իմաստը, որը, առավել կամ նվազ չափով, բարբառներում տարբերվում է նույն բառի՝ հին մատենագրության մեջ եղած իմաստից:

Ինչ վերաբերում է փոխառյալ բառերին, ապա դրանց «անխնայ կերպով» վտարելու սկզբունքը, եթե սխալ չէ, այնուամենայնիվ բավականին միակողմանի է ու խիստ: Մինչդեռ այդ սկզբունքն էլ հետևողականորեն չի կիրառված և բառարանի մեջ են առնված ոչ միայն հայերենում լայն ճանաչում ու գործածություն ունեցող, արդեն հայացված օտար բառեր, այլև այնպիսի օտարաբանություններ, ինչպես ալլիկ (ալլոց), բարբուլ, գալանոջ, թրիշա, լիթոն, խզակ, կուպպա, դեկոտ, հապազ, պախեզ, սաղունձ, փալնաֆաշ, փելա, ֆալաղա և այլն, որոնք այս կամ այն բարբառում հանրահայտ լինելով հանդերձ, այնուամենայնիվ լայն տարածում չունեն և բնավ էլ հայացված չեն կարող համարվել հայ բանահյուսական ու գեղարվեստական գրականության մեջ ընդհանուր ճանաչում ունեցող և իրոք հայացած աբա, բլբուլ, գավ, դան, գինգ, թարխուն, լազուտ, խոռոտ, կոպալ, կուրտիկ, հանակ, շուլալ, չիր, պզտիկ, ստակ, տոպրակ, փիսիկ, փուն, ֆարթու, ֆոխտիկ և այլ բառերի նման:

Հ. Աճառյանը միանգամայն իրավացիորեն օտար և հայերեն բաղադրիչներով կազմված բառերը մտցրել է բառացանկի մեջ: Սակայն, այս դեպքում էլ ընդունելի չի կարելի համարել օտար և մայրենի բառերից կազմված հարգմունքների ու բառակապակցությունների օտար տարրերը հայերեն թարգմանելու սկզբունքը, ինչպես ծակ բուկ (փոխ. ծակ պողպատ), երիտասարդաշենք (փոխ. շանելաշենք) և այլն: Չէ՞ որ տվյալ բարբառում այդ բարդությունը կազմվել և գործածվել է հենց այդպես, ասենք՝ ջանելաշենք, Ղարա-

¹¹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 18:

բաղի բարբառում երիտասարդի փոխարեն գործածվող ջաճել բառից: Նույնը վերաբերում է նաև ծակ բուկ («ծակ պողազ»-ի փոխարեն) բառին, որն, ի դեպ, իր երկու ձևերով էլ բացակայում է բառարանից և իբրև օրինակ բերված է առաջաբանում միայն¹², Օտար բաղադրիչի թարգմանությամբ փաստորեն ստացվում է բառարանի հեղինակի կողմից կազմված մի արհեստական արտահայտություն, որը կարող են նույնիսկ դուրսացնել լեզվի բարբառով խոսող անհատները: Բառերն ու դարձվածները բարբառներում կենսունակ են իրենց հենց այդ ձևերով, և նրանց կազմության մեջ կատարված ամեն մի միջամտություն փոփոխում, անհարազատ է դարձնում բառը տվյալ բարբառային հանրության համար: Խոսողները հազիվ թե ճիշտ ընկալին բարբառային արձուժը ինքն դարձվածը (որ չկա Գավառական բառարանում), եթե դրա առաջին բառը՝ արձու (պարսկերեն abru), թարգմանվեր հայերեն համապատասխան ամոք, պատիվ բառերով:

Նախաձևերի վերականգնումը շատ կարևոր գիտական նշանակություն ունեցող խնդիր է: Եթե հաջողվեր վերականգնել բոլոր բարբառային բառերի նախաձևերը, ապա բառարանը ոչ միայն ավելի մեծ գիտական արժեք կունենար, այլև կառուցվածքով առավել կատարելության կհասներ: Սակայն բոլոր գլխաբառերը վերականգնված նախաձևեր չեն, ուստի և բառացանկում գլխաբառերի ընտրության սկզբունքը միասնական չէ: Այս պայմաններում, թերևս, հարմար կլիներ որպես գլխաբառ ընդունել ուղղակի բարբառային ձևը. մեկ բարբառում վկայված բառը նույնությամբ, իսկ տարբեր բարբառներում առկա բառերից՝ այն տարբերակը, որը ձևով և իմաստով ավելի մոտ է համապատասխան գրաբարյան ձևին: Այդ դեպքում վերականգնված նախաձևերը կարող էին տրվել գլխաբառից անմիջապես հետո: Բառարանի օգտագործման տեսակետից հարմար կլիներ գլխաբառի տարբերակները (հատկապես լայն տարածում ունեցող բարբառային ձևերը), իմաստների նույնության դեպքում բառաշարքում բերել որպես գլխաբառեր՝ անհրաժեշտ նշումներով և հղումներով: Կարելի է ասել, որ գլխաբառի ընտրության հարցն ըստ ամենայնի Գավառական բառարանում չի լուծված:

Գլխաբառերի տարբերակների գրանցման կամ բառարանից դուրս թողնելու հարցը սկզբունքային կարևոր նշանակություն ունի բառարանագրության մեջ: Լավ կլիներ, եթե բոլոր բարբառային տարբերակները գրանցվեին բառարանում: Բառարանի ծավալն իրոք կընդարձակվեր, սակայն խառնաշփոթություն չէր լինի, իսկ գիտությունը, ընդհանրական, շատ փաստեր կստանար և կշահեր: Գիտությանը կնպաստեին հայերենի դարավոր զարգացման ընթացքում առաջացած ու բարբառներում պահպանված լեզվական այն կոնկրետ իրականությունները, որոնք, մանրուքներ համարվելով, հաճախ անտեսվում են, բայց առանձին դեպքերում, հատկապես պատմական հնչյունափոխության ուսումնասիրության բնագավառում, հանդես են գալիս որպես անգնահատելի փաստեր՝ գիտական ապացույցների ու լուսաբանումների համար: Բարբառները դատապարտված են մահացման, և կորստից փրկված ամեն մի պատմական իրականություն, թեկուզ փոքր ու աննշան, իր որոշակի նշանակությունն ունի գիտության համար: Բարբառային ձևերի բառարանային գրանցման կարևորությունը ցույց տալու համար դիմենք Գավառական

¹² Նույն տեղում, էջ 19:

բառարանի հենց առաջաբանում բերված օրինակներին. «Տփղիսեցիք կը գործածեն ծիտ բառ մը՝ որ կը նշանակե «20 կոպեկանոց», ասոր հետ հարկավ նույն են Ղարաբաղցոց ծեռ և Ագուլեցոց ծալտ բառերը, որոնք կնշանակեն «5 կոպեկանոց»¹³: Եթե իմաստային տարբերությունն էլ հաշվի չառնենք, որ ծիտ նշանակում է 20 կոպեկ, իսկ ծեռ և ծալտ՝ 5 կոպեկ, ապա այդ բոլորը պետք է մտնեն բառացանկի մեջ, գոնե միևնույն բառահոգվածում. քանի որ մեկն ընտրելու և մյուս երկուսը մերժելու պատճառը հայտնի ու հիմնավորված չէ: Իսկ գործնական տեսակետից դա զգալի թերություն է: Հայ ընթերցողը, եթե ծանոթ չէ բարբառներին, որտեղ պիտի դնի ծեռ և ծալտ բառերի բացատրությունը: Բառարանի այդ սկզբունքին համաձայն՝ վերոնշյալ տարբերակների նման շատ բառեր չպետք է տեղ գտնեն բառացանկում. սակայն, «առնենք տե՛ս առնանք», «բլբլցնել տե՛ս բլբլացնել», «վլլուլ տե՛ս չիլալ» և նման բազմաթիվ բառահոգվածների առկայությունը բառընտրության սկզբունքի խախտում լինելուց բացի, ապացույցն է այն բանի, որ «կրկնակ, եռյակ, քառյակ և ավելի ձևերեն» խուսափելը ոչ միայն սխալ է սկզբունքորեն, այլև գործնականում շատ հաճախ անկարելի: Մինչդեռ առանձին նկարագրական բնույթի ձգձգված բառահոգվածների (ակռափափիկ, խալիկ, կոռոպ, հիկիլիսոն, սիրուրիւ և այլն) սեղմման դեպքում հնարավոր կլինե՞ր ընդգրկել բառերի մնացած տարբերակները՝ առանց բառարանի ծավալի զգալի ընդարձակման:

Կասկածելի բարբառային բառերի ընտրության հարցը նույնպես չի լուծված Գավառական բառարանում. գավառական բառերի բնորոշման՝ Հ. Աճառյանի սկզբունքը, ապա և դրա անհետևողական կիրառությունը հնարավորություն չեն տվել ստեղծելու խստորեն ընտրված, մշակված ու համակարգված բառացանկ: Դրա պատճառն այն էր, որ նախ՝ Հ. Աճառյանը բառագիտական մանրախույզ վերլուծության չի ենթարկել բառի ու բառիմաստի փոխհարաբերության հարցը Գավառական բառարանում, ապա՝ անտեսելով ժամանակաին գործոնը և հիմնվելով միայն հին մատենագրության վրա, չի կարողացել անհրաժեշտ պատմական մոտեցում ցուցաբերել՝ բարբառների ու գրական լեզվի հարաբերակցությունը գնահատել զարգացման ու ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունների մեջ: Գավառական բառարանում րաւը պիտի բերվեր ոչ թե ընդհանուր հայերենում (գրական լեզվում և բարբառներում) ունեցած իր բոլոր իմաստներով, այլ միայն բարբառային իմաստներով ու գործածությամբ: Այդ դեպքում կարիք չէր լինի բերելու բոլոր մայր ձևերն իրենց մեկնություններով ու օրինակներով, ինչպես՝ «արտ, արտը ցանել, վարել, ջրել. արտը կանաչել է, հասել է. արտը հնձել, փաղհանել. ջրովի արտ, դեմի արտ, արտը աղանձվել է, հաւանց է գնում. արտը մորեխը կերել է» բառահոգվածը, այլ նրանից կմնար միայն «Արտը աղանձվել է, հաւանց է գնում» դարձվածքը: Մայր ձևերը բացատրող այսպիսի բառահոգվածները, որոնք զգալի տեղ են զբաղեցնում բառարանում, երբեմն ուղղակի չեն կապվում հիմնական բարբառային իմաստի հետ, ինչպես՝ «Անհոգ՝ անհոգ. անփույթ: Անհոգ մարդ: 2. Մշ. արորին մասերեն մեկը»: Բառացանկի մեջ չպիտի մտնեն՝ ախ փաշել, ախ/ու/վախ, ահ/ու/դող, աղ/ու/հաց, աման-չաման, ամպամած, ամպակալել, անգործ, անհոգ, անց կենալ, աչքացալ, քարի

¹³ Նույն տեղում, էջ 8.

լուս, բաց անել, բաց թողնել, բերանբաց, գլխաբաց, գլխով անել, գլուխ բերել, գլուխ իջեցնել, գլուխը կորցնել, գլուխ պահել, գլուխ տալ, գործ բռնել, դայա՛ր տալ, դուրս գալ, երշիկ, թոկից փախած, թուխս, թրատել, իլիկ, հալած ևդի տեղ ընդունել, լեյլիկգուն, լուսաստղ, խանութ, խաչմերուկ, խառատ, խեյֆի բերել, խելիք գլուխը, խոսք ապ, ծծմբաքուր, կոշտ ու կռախտ, հաս ու հոտ, հով անել, ձեռք բարձրացնել, նեղել, սակարդել, մնացուկ, սեպ ընկնել, շուռ գալ, ուշի բերել, պարզերես, պեմակա՛ն, պոռթկալ, պրստել, քոկել, սարֆել, սիրտ մաշել, սլուր ծակել, վարար, ֆաղցրեղեն և բազմաթիւ ալլ հարադիրներ ու դարձվածներ, եթե բառարանի հեղինակի շահանիշը միայն գրաբարը չլիներ:

Մինչդեռ բառարանը եղածվել է նոր գրական հայերենի հաղթանակի: Հետո, երբ գրական աշխարհաբարն ընդարձակվում էր, իր ազդեցությունը ապրածում բարբառների վրա, միօրինակում ու դառնում ընդհանուր խոսակցական լեզու¹⁴:

Գրական լեզվի զարգացման ու հարստացման արդի էապում էլ անհրաժեշտություն է դրացվում կազմելու ընդհանուր հայերենի նոր բարբառային բառարան, որի բառացանկի ընարություն, կառուցվածքի, կազմություն, սկզբունքների մշակման և ալլ հարցերում անգնահատելի է նախորդ շրջանի բառարանների դերն ու նշանակությունը: Ս. Ամատունին իր բառարանի մասին համեստորեն գրում է. «նոստովանում ենք, որ մեր այս աշխատությունը իբրև առաջին փորձ ունի յուր պակասությունն ու թերությունը. մենք կատարելապես մխիթարված կլինենք, եթե սեր այս պակասավոր փորձը դրդիչ դատճառ դառնա նմանօրինակ, բայց կաարյալ մի գործի»¹⁵: Նույնը, որոշ տարբերությամբ, վերաբերում է նաև Հ. Աճառյանի բառարանին, որի արժեքավոր լինելն անժխտելի է:

«ПРОВИНЦИАЛЬНЫЙ СЛОВАРЬ АРМЯНСКОГО ЯЗЫКА» РАЧИЯ АЧАРЯНА

ТОРГОМ МХИТАРЯН

Резюме

Исследование вопросов, связанных с основными принципами и методами построения армянского провинциального словаря Р. Ачаряна, выявляет неполноценность данного лексикографического труда, что в свою очередь объясняется теоретическими посылками автора в отношении провинциальных словарей, а также некоторыми объективными причинами. Однако в целом словарь является важнейшим памятником армянской культуры, который по сей день не потерял важности как в армянской лексикографии и диалектологии, так и в этнографии и фольклористике.

14 Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 64:

15 Ս. Ամատունի, նշվ. աշխ., էջ Թ: